

դգալի է թէ շքեղութիւնը եւ թէ առաւելութիւնը սովորական աթոռոց հասակէն»<sup>(20)</sup> :

Գժբազդարար Հ. Հացունի կը սխալի ոչ միայն բազմականին տըւած իր իմաստին մէջ, այլ նաեւ հին հայկական սեղանին նկարագրութեան մէջ: Մենք «Գորգի Գործածութեան» բաժնին մէջ պիտի տեսնենք որ Հայ հարուստին թէ աղքատին սեղանը բարձր չէր բեմէն (դախտ), եւ սեղանը կը յարգարուէր ուղղակի գեանին վրայ սըփոռուած գորգին վրայ: Ինչպէս վերի հատուածը ցոյց կու տայ: Հ. Հացունի կը կարծէ ապացոյց գտած ըլլալ Մանդակունիի սա վկայութեան մէջ, երբ մատենադիրը կը խօսի ազապի ճաշի մասին՝ ուր հարուստ եւ աղքատ միասին կը ճաշէին. «Նոքա (հարուստք) մեծարանօք ի վեր, եւ Քրիստոս (այսինքն աղքատք) արհամարհանօք ի խոնարհ. նոքա պատուով ի բազմականի, եւ Քրիստոս արհամարհանօք առ պատուանդանի»<sup>(21)</sup>: Ես հոս Հ. Հացունիի վարկածը հաստատող ոչինչ կը գտնեմ: Մանդակունիի խօսքերը խիստ որոշ են: Հ. Հացունի ընդդժմեմներով կ'ուզէ ի վեր եւ ի խոնարհ բառերուն տարբեր իմաստ մը տալ, մինչ ի վերը հոս նստողներուն շարքին գլուխը՝ որ նոյն ատեն պատուոյ տեղը կը սեպուէր՝ կը նշանակէ, իսկ խոնարհ հոս իր բառացի իմաստը կը պահէ: Ուրեմն, ըստ Մանդակունիի, երբ ճաշի կը նստէին հարուստները գորգին (բազմականին) վրայ սեղանին պատուոյ տեղը, գլուխը (անշուշտ իւրաքանչիւր հարուստ կամ երեւելի իր արժանեաց համաձայն եւ աստիճանով) կը բազմէին, մինչ աղքատները առ պատուանդանին, այսինքն սեղանը սփռուած ըլլալով տախտակամած բեմի կամ պատուանդանի վրայ (դախտ), աղքատները այնքան պատուոյ անարժան կը գտնուէին որ նոյնիսկ սեղանին գորգէն գուրս յարգարուած սեղանի վրայ սեղանակից կ'ըլլային, նստելով զոր տախտակամածին, պատուանդանին վրայ:

Հ. Հացունի ուրիշ կէտ մըն ալ նկատի առնել կու տայ, բազմականը իրր բարձր սեղանի նստարան մը նկատելէ վերջ, որ «Յիշուած կը գտնենք թէ՛ միաւորը, եւ թէ՛ բազմաւորը: Առաջինը՝ երբ կը խօսուի Պարսից վրայ. զոր օրինակ՝ Յազկերտ զիւրաքանչիւր տեղիս շնորհէր նոցա զբազմականին (Եղիշ. 17): Եւ Նիւշապուհ մոզպետին սեղանին շուրջ՝ կ'ըսուի ունել գգլուխ բազմականին կամ զիւրաքանչիւր տեղի բազմականիդ, կամ ի գլուխ բազմականիս մերոյ (նոյն, 132-3) ուր բազմականը միշտ եզակի է թուով: Բայց նոյն տեղ կ'ըսէ նաեւ ի բազմականացն անդ(134) զոր եթէ հեղինակին կամ գրչաց անուշադրութեան արդիւնք կարծենք, Պարսից բազմականը միապաղաղ պիտի համարինք: Իսկ հայ տաճարաց մասին խօսուած տեղը, նստարանք միշտ յոգնակի են. ինչպէս բազմակալացն կարգելոց (Փաւստ. 67), կամ ի բազմականացն, որոնցմէ իւրաքանչիւր կոչնական իրենն ունի. յիւրն

(20) Ճաշեր եւ ինճոյք հին Հայաստանի մէջ: - Ս. Ղազար, 1912, էջ 52:

(21) Յովհ. Մանդակունոյ՝ ծառք, Ս. Ղազար, 1860, էջ 61: